Հավելված
ՀՀ վարչապետի
N 546-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

NN ը/կ	**Միջոցառման անվանումը**	**Իրականացվող գործողությունների նկարագիրը**	**Պատասխանատու մարմինը /համակատարող մարմինը և աջակցող կազմակերպությունը**	**Կատարման վերջնաժամկետը**
1.	ՀՀ բյուջետային գործընթացում մասնակցային բյուջետավորման ներդրման աշխատանքների կազմակերպումն ապահովող աշխատանքային խմբի ձևավորում	Աշխատանքային խումբը կձևավորվի համայնքային մակարդակում մասնակցային բյուջետավորման ներդրման համար ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ստեղծված աշխատանքային խմբի ընդլայնմամբ՝ այդ խմբում ներառելով ներկայացուցիչներ ՀՀ ֆինանսների նախարարությունից և այլ աջակցող զարգացման գործընկեր կազմակերպություններից (համաձայնությամբ)	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն զարգացման գործընկեր կազմակերպություններ	2023 թ. հունիսի 1-ին տասնօրյակ

2.	ՀՀ բյուջետային գործընթացի շրջանակներում մասնակցային բյուջետավորման և մասնակցա-յին բյուջետավորմամբ ձևավոր-ված բյուջետային ծրագրերի/ միջոցառումների ֆինանսա-վորման կարգի մշակում	ՀՀ բյուջետային գործընթացի շրջանակներում մասնակցային բյուջետավորման և մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված բյուջետային ծրագրերի/ միջոցառումների ֆինանսավորման կարգը սահմանող ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն զարգացման գործընկեր կազմակերպություններ	2023 թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ
3.	ՀՀ 2024 թ. պետական բյուջեի նախագծով մասնակցային բյուջետավորման փորձնական ներդրման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների նախատեսում	ՀՀ 2024 թ. պետական բյուջեի նախագծով նախատեսել ֆինանսական միջոցներ՝ ՀՀ պետական բյուջեից մասնակցային բյուջետավորման ընթացակարգերով ձևավորված ծրագրերի/ միջոցառումների ֆինանսավորման համար	ՀՀ ֆինանսների նախարարություն	2023 թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ (ՀՀ վարչապետի 26.01.2023 թ. N 86-Ա որոշմամբ՝ ՀՀ 2024 թ. պետական բյուջեի նախագծի մշակման և ներկայացման համար սահմանված ժամկետում)
4.	ՀՀ բյուջետային գործընթացի շրջանակներում մասնակցային բյուջետավորման ներդրման վերաբերյալ տեղեկատվական իրազեկում	ՀՀ բյուջետային գործընթացի շրջանակներում մասնակցային բյուջետավորման վերաբերյալ հանրային իրազեկման իրականացում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ տարածքային կառավարման և	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2023-2024 թթ. բյուջետային տարիների ընթացքում

		ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական ինտերնետային կայքերով և սոցիալական մեդիայի էջերով		
5.	ՀՀ բյուջետային գործընթացի շրջանակներում մասնակցային բյուջետավորման վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրում	Մասնակցային բյուջետավորման փորձնական ներդրման նպատակով մասնակցային բյուջետավորման գործընթացի մասնակից տեղական ինքնակառավարման մարմիններին խորհրդատվությունների և պարզաբանումների տրամադրում (այդ թվում՝ առցանց) մասնակցային բյուջետավորման գործընթացների վերաբերյալ	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն զարգացման գործընկեր կազմակերպություններ	2023-2024 թթ. բյուջետային տարիների ընթացքում
6.	ՀՀ բյուջետային գործընթացի շրջանակներում մասնակցային բյուջետավորման գործընթաց-ների իրականացման մշտա-դիտարկում	Մասնակցային բյուջետավորման գործընթացների իրականացման (ընթացքի) մշտադիտարկում (այդ թվում՝ գործընթացին մասնակից տեղական ինքնակառավարման մարմիններում)	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն զարգացման գործընկեր կազմակերպություններ	2023-2024 թթ. բյուջետային տարիների ընթացքում
7.	ՀՀ բյուջետային գործընթացի շրջանակներում մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված բյուջետային ծրագրերի/ միջո-ցառումների գծով ՀՀ 2024 թ.	Բյուջետային տարվա ընթացքում մասնակցային բյուջետավորման ընթացակարգերով ձևավորված ծրագրերի գծով հայտերի ստացում, ուսումնասիրում, գնահատում և ՀՀ 2024 թ. պետական բյուջեից	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն	2024 թ. բյուջետային տարվա ընթացքում

	պետական բյուջեից հատկա- ցումների տրամադրում	մասնակցային բյուջետավորման ընթացակարգերով ընտրված ծրագրերի գծով հատկացումների տրամադրում՝ ՀՀ բյուջետային գործընթացի շրջանակներում մասնակցային բյուջետավորման և մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված բյուջետային ծրագրերի/ միջոցառումների ֆինանսավորման կարգին համապատասխան		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

22.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ